


Jowhannēs Thlkouranc'in eu iur tałere'

K. Kostaneanc'

Kostaneanc', Karapet



11

Three

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ

Ե Կ

ԻՒԹ ՏԱՂԵՐԸ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՑ

ТИФЛИСЪ.

Типографія И. Мартirosiana, Орбеліановская улица № 1—2.

1892 .

ԱՐԵՎԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆ

ԳՅ

ԵՎՀԱՑ ՊԱԴ

Дозволено цензурою, Тифлисъ, 18-го сентября 1892 г.

ՏՐԱՋԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃՈՒ. ՓԻ. Դ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԱՐԱՐԱՆԻ ՎԱՐԱՐԱՐԱՆ

1881

Յ Ա Կ

1. Յովհաննէս Թղթուրանցի.
2. «Գէնայ բահար, ազւի բահար»
3. «Երե նման շողշող կըտաս»
4. «Եսի սիրէ զիս, ծով աչեր»
5. «Լոյս երեսացդ է խիստ փափուկ»
6. «Սիրով մի սպանաներ»
7. «Ահա եղեւ պացձառ գարուն» (տաղ գարնան)
8. «Ես զձեզ տեսայ սիրով նոտած»
9. «Եւերդ է թուլս ու պէտ»
10. Տաղ վասն արբեցութեան.
11. Վասն սուտ սիրելեաց.
12. Ի վերայ մահուան.
13. «Է՛ մահ, քանի գքեզ ցիշեմ»
14. «Հայր մեղայ ասեմ ցերկինս»
15. «Թէ մահն չէր ու կամ մեռնիլ»
16. «Յամենայն մեղաց, ասէ, ի զատ»
17. Տաղ քաջի կիսպարտին.

ալքանորի՞ն և մանաշին ։ 1
 շահանց վեցը, զաշաղ չամչեթ ։ 2
 սպանդ բարձր մասն ամեն ։ 3
 գնչա խռճ այբ Ազյաւիթ ։ 4
 քանիսի սախի չ բասազդ այս ։ 5
 օդինական ին խորին ։ 6
 (մամկար բառ) և մ տուք ունջնոր մըս աշԱ ։ 7
 Չոսում խոզին շահան բժիր սՄ ։ 8
 Հառուսո պեղորու շայ շայ սՅ ։ 9
 մաս ել տոքմզն մասի բա՛ Ա ։ 10
 բամբիդո ուսու մասի ։ 11
 մատեան խորի ։ 12
 և մայի բառը գմաղ, շան Շ ։ 13
 և մամբենի ենաս շարսն զյան ։ 14
 ըլիսնին նայ առ դժէ մշան ՃԹ ։ 15
 շուար Շ շաս քարին մշամմեան ։ 16
 մժապարով դիսաց բա՛ ։ 17

ՅՈՎԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

Զեւս փափի ի հող դառնայ,
Դիրս ցիշատակ առ ձեզ մնայ:

Վահկայ բերդի փոշիացած փլատակների մէջ
ո զիտէ որ անշուք շիրիմի տակ Հանդչում են այսօր
Յովհաննէս Թլկուրանցու նշխարները: Արդէն 367
տարի է, որ նա աւանդել է իւր վերջին շունչը,
սակայն նորա դգացմունքները, նորա բարբառը, նո-
րա գիրը տակաւին կենդանի են, և նա կարծես
այժմ էլ խօսում է մեր սրտի հետ:

Ո՞վ է Յովհաննէսոր, ո՞րն է նորա ծննդավայրն
ու սննդավայրը, ինչ բարդի դաւակ է նա, ահա
հարցեր, որոնց պատասխանը չի երևում մեր պատ-
մութեան էջերում: Մականուանը նայելով, նա ծր-
նուել է Թլկուրան կամ Թուլգուրան աւանում, որ
գտնուում է Հայոց Միջազետքում Տիարբէքիր կամ
Ամիդ քաղաքից դէպի հարաւ. այդ աւանումն ժի.
դարում ապրում էր աստուածասէր իշխանն Առիծ,
որի խնդրանքով ո. Կերսէս Ճնորհալին զրել է իւր
թղթերից մ, կր: Խոկ թէ այդ աւանն ինչ էր ժգ.
դարում և ինչքան նշանակութիւն է ունեցել Թլկ-
կուրանցու կեանքի համար, ոչինչ չգիտենք: 1489
թուից մինչև 1525 թիւը Յովհաննէս Թլկուրանցին
կաթուղիկոս էր Սոլ աթոռի վերայ. այստեղ Գրի-

գոր Թ. Մուսաբէդեանից յիտոյ նա հինգերորդ աթոռակալն է եղել Յովհաննէս Բ. անունով *):

Թլկուրանցու կեանքի և հայեացքների վերայ փոքր ինչ գաղափար կազմել կարելի է նորա երգելով. նոցանից մենք տեղեկանում ենք, որ նա հասած է եղել ծերութեան պատկառելի հասակին. մի երգի մէջ նա ինքն իրեն յանդիմանում է.

«Եօթանասուն տարին լցեր,

Ի մեղաց մէջն կացեր ես.»

մի այլ երգի մէջ նա, ուզելով բացատրել սիրոյ աղդեցութիւնը և գեղեցիկ կնոջ գործած տպաւորութիւնը, կարծես իրեն ակնարկելով, ասում է, որ հարիւր տարեկան արեղաներն անդամ, որոնց մուրքի սպիտակութիւնն արգէն ոկտում է գեղնել, չեն կարող դիմանալ գեղեցկութեան ոյժին.

«Հարիւր տարւոյ հարեղանին,

Որ ճերմակն է գարձեր գեղին,

Կտրէ զկուտիկ պատարագին,

Ու զքեզ ուզէ առջև խաչին:»

Թէ արգեօք Թլկուրանցին, որ եօթանասուն տարեկան հասակում իրեն յանդիմանում է գրչով, որքան երկար է ապրել այնուշետե, չենք կարող ուրոշել: Նորա կաթուղիկոսութիւնը տւել է 36 տա-

*). 2 ամէեան, Պատմ. Հայոց Գ. 508. Ալիշանեան հանդիման, Ստուան 218, 226, 535 և 539. Կոչն, Յուշիկը հայրենիաց Բ. 125, 510. Արուան ձանեանց, Պանանա, Կ. Պօլիս 1876. Տէվկանց, Հայերդ, Թիֆլիս 1882.

թի, որ մի պատկառելի ժամանակ է նորա կեանքի մնացորդը դորանով չափելու համար:

Թլկուրանցու հասակի մասին այսքան գաղափար կազմելուց յետոյ՝ հետաքրքիր է իմանալ թէ ով էր նա մինչև իւր կաթուղիկոսանալը: Մի երգի մէջ նա իրեն անուանում է «Սուրբ Կարապետի ճորտու ծառայ»: Աւանդութեամբ հասել է մեզ այն գաղափարը թէ «Մշու սուլթան մուրատատու» սուրբ Կարապետը հաւատով իրեն ապաւինողներին, իրեն ուխտաւորներին, պարզեւում է զանազան ձիրքեր, ինչպէս են նուազելը, երգելը, լարի վերայ խաղալը ևայն: Նոքա, որոնք իրենց եօթնամեայ պահեցողութիւնից և իրենց ուխտը սրբութեամբ կատարելուց յետոյ հասնում են իրենց բաղձանքին, իրենց համարում են ծառայ և ճորտ ո. Կարապետի. դոքա են զանազան աշուղները, ըմբշամարտները, լարախազացները ևայն: Արդեօք Յովկաննէս Թլկուրանցին այդ իմաստով է խօսում իւր մասին, թէ նա նուիրուած է եղել Ա. Կարապետի անունը կրող մի վանքի, չենք կարող որոշել: Սակայն նորա երգերի մեծ մասի ներքին բովանդակութիւնից կարելի է մակարենել, որ նա առաջին իմաստով է իրեն անուանել «ծառայ և ճորտ ո. Կարապետի»: Նորա երգերի մի մասի մէջ երեւում է երիտասարդական խանդ, մեծ ոգևորութիւն աշխարհիս վայելքների վերայ: Երգերի միւս մասի մէջ երեւում է ծեր նըստած մարդու իրատող բնաւորութիւնը. նոյն մէջ

Թղկուրանցին զգուշացնում է մեզ աշխարհիս հրա-
պոյրներից, լիշեցնում է մեղքի աղբեցութիւնը, ուստ-
ափեցնում է մահի և յաւիտենական պատիժների
դադախարավ: Եթէ նորա երգերի այս երկու տարրեր
յատկութիւնների մէջ որոնելու լինինք մի կապ,
մենք կը տեսնենք, որ նոքա բնական ծնունդ են
այն վիճակի, որի մէջ անցել է Թղկուրանցու կեան-
քը: Երիտասարդական կեանքի լիշատակները պատ-
կերացած են նորա առաջին երգերում, որոնք երևի
նա հէնց աշխարհական վիճակի մէջ է յօրինել: Այն
ինչ նորա երգերի երկրորդ խումբը ծնունդ է նորա
մենաւոր կեանքի, երբ զղումն ու ապաշտւանքը
մի կողմից, եկեղեցական կոչման ծանր պարտիքը
միւս կողմից յառաջ են բերել նորա մէջ ձգտումն
խրատելու ուրիշներին և զգուշացնելու մեղքի վտանգ-
ներից: Երկու խմբերի՝ մէջ այսպիսի մի յաջորդա-
կանութիւն են ժամանելով, մենք կարող ենք հասկա-
նալ և այն խիստ տարրերութիւնը, որ երևում է
Թղկուրանցու երգերի առանց այն էլ անպանոյն բար-
բառի մէջ: Առաջին խմբի բարբառն խկապէս կորով
է ներշնչում, պարզ է, և կենդանի, կարելի է աօել,
այդ բարբառն իրեն ստեղծող երիտասարդի նման
աշխոյժ ունի, կրակոտ է: Մինչդեռ երկրորդ խմբի
երգերի բարբառը մշակուած է ժամանակի արուեստի
չափով, սահուն է և մասամբ շինծու: Այս տարրե-
րաթիւնը նշմարելուց յիտոյ կարելի է մինչեւ անգամ
առել, որ Թղկուրանցին երիտասարդ հասակում, աշ-

իսարհական ժամանակ, եղել է աշուղ, եթե ոչ արհեստով, դէթ իւր կոչմամբ։ Թէ արդարեւնա երգել է ինչպէս մի արևելեան աշուղ, այդ երևում է նորա երգերի արտաքին ձևից ու խօսքերից, որոնք նման են արևելեան աշուղների ընդունած ձևերին։ Նա զործ է զրել բաղմաթիւ թուրքերէն և պարսկերէն բառեր և դարձուածներ *։ Մեր ձեռքի տուկ զըտնուած մի զբշեալ տաղարանի մէջ, որ զըտնուած է 1695 թոին, կան տաղեր, որոնք ամբողջապէս թուրքերէն են յօրինուած, նոցանից մէկի վերնագիրն է «տաղ Քրիստոսի ասացեալ ալլազգի լեզուաւ» սկզբի խօսքերն են «Քիմ սէյ պէնի պիլմէղենտի»։ ընդ ամէնը 10 տուն է, վերջինը միայն հայերէն է, որ է այսպէս։

«Ես Յովհաննէս Թլկուրանցի

Զայս բանս ասի ի վերայ Քրիչի, ուստի Եկն կամաւ ի վերայ խաչին և ազատեաց, և ազատեաց, և ազատեաց զնողիսն ի բանտէն, ի բանտէն, զնողիսն գանըմ, զնողիսն ի բանտէն։»

Միւս տաղը, որի վերնագիրն է «տաղ Յովհաննէս Թլկուրանցւոյ ասացեալ է», յօրինուած է հայերէն և

*) «Քէնա ըահար, այլի ըահար» «բոլոր լուսին շամառւ դամար» «որ է ստեղծուած նախշու ու նիգար» «պատող կուտաս մուշկ ու ամպար» «իջնունք ի բահչեն ըլլը ու ի նախամար ու մէստան» և այլն։

թուրքերէն՝ իւրաքանչիւրը մի մի երկտող՝ ընդ ամէնն Զ տուն. սկզբի տողն է «Արարիչ արարածոց գասուց»: Այս ամէնից հետևում է, որ Թլկուրանցին քաջ գիտէր Թուրքերէն, ծանօթ էր Պարսկերէնին, վարժ էր Թուրք և Պարսկի և առհասարակ արևելեան երգիչներին յատուկ ձևերի մէջ և հմուտ էր նաև արևելեան եղանակներին: Թուրքերէնի և Պարսկերէնի գործածութեան նկատմամբ Թլկուրանցին հետևել է իրեն ժամանակի սովորութեանը, երբ Հայոց երգիչների մեծ մասը շատ կամ սակաւ չափով պայլեցնում են իրենց հանճարը լիշեալ լեզուներով, թերևս քաղաքական և ընկերական կեանքի ներքին ոլալմաններից թելադրուած: Այսպէս են՝ Առաքել Բաղիշեցի, Գրիգոր Աղթամարցի, Յակոբ, Ղազար, Մկրտիչ Նաղաշ, Կոստանդին Երզնկացի և այլ շատերը, որոնց առանձին առանձին ուսումնասիրութիւնը, եթէ մեզ մի օր յաջողի հրատարակել, աւելի լաւ կը պարզէ նոցա ժամանակի ոգին:

Յովհաննէս Թլկուրանցու երգերի բովանդակութեանը նախելով, կարող ենք ասել, որ գարնան օրերը, ընութեան վայելչութիւնները, սէրը, կնոջ զեղեցկութիւնը, աշխարհային գուարճութիւններն սկըզբում մեծապէս ոգեսրել են նորան: Նա հիանում է, երբ ձմռան կապանքների արձակուելոց յիտոյ բայց ուում են գարնանային օրերը, գեղեցիկ զարդարում է քնութիւնը, կեանք են առնում բոլոր շնչաւորները, աշխարհը լիանում է նոր նորոգուած կեանքի քաղց-

բութիւններով. ձմեռնային գելութեանը յաջորդում
է լիակատար ազատութիւն, որ շունչ է տալիս յա-
փշտակուած երդչին և հրապուրում է նորան դեպի
ալգիքն ու պարտէզները.

«Ահա եղեւ պայծառ դարուն.

Ֆաղկեալ ալգիքն ու պայչանին,

Գունդքն ծաղկին ու հնտ կապին,

Անուշանայ հովն ու քամին,

Չագերն ձայն ածեն յայգին,

Քաղցր կուգայ ձայն պիւլպիւլին.

Կութանձրանայ շուքն ծառին,

Ցորդոր գնայ ջուրն ի յառջին...»

Նորաբաց գարնան այս հաճոյքները զարթեցնում են
Թիկուրանցու մէջ սիրոյ զգացմունք. նա ուրախացած
բացազանչում է «Գէնայ բահար, ալլ' ի բահար

Ալլ' ի կուտան սիրոյ խաբար...»

Գարձեալ գարուն, գարձեալ հասաւ սիրոյ պատգամ
կրակոտ երդչին. նա քաջ զիտէ ալդ սիրոյ զօրու-
թիւնը.

«Մէրն կուտանի զամօթն յերեսէն

ի հաբեղայէն, ի վարդապետէն

Երէց, սարկաւագ կուձգէ կարգէն...»

Նա քաջ զիտէ, որ սէրը փոխում է կրօնաւորներին,
կարգից հեռացնում է կարգաւորներին, շփոթում է
միանգամայն և նոցա տրամադրութիւնը.

«Մարդ որ սիրոյ կուհանդիպի,

նա քան զկրակ կուլինի վառ.

Այլ ոչ ազօթք ի միտ կարդայ,
Ոչ Յախմաւոք կարդայ ու ճառա»
Իսկ ով կարող է սիրել առանց փոխաղարձ սէր զը-
գալու: Թղկուբանցին սիրում է ջերմ սիրով մի չքնաղ
պատիեր, որի գովասանքն անելիս նա չի դտնում
բաւոկան խօսքեր, նա գրուատում է «ծով ծով ա-
չեր» «կեռ կամարակապ ունքեր» «լուս սպիտակ ճա-
կատ» «լար լուսեզէն շրթունքներ» «մարդարտաշար
առամներ» «շողման կլափ» «ոսկէթել վարսեր» «ճօ-
ճան շողկտակ վիզ» «շաքար բերան» «անուշ ձայն»
և «նազելի հասակ:» Ահա նորա ներկայացուցած գե-
ղեցկութեան օրինակը.

«Գով ծով աչեր ու լուսքնար
Ռւնքն կեռ էր քան դկամար.
Ճակատդ է լուս ու լուսքնար
Բոլոր լուսին շամս ու դամար
Վարսերդ ոսկի թելէ քաշած
Ակերայ մարմնոյդ եկեալ հաւար.
Ծոցդ է բադչայ վարդով ի լի
Մարդըրիտ առմունքդ ի շարէշար.
Մարմինդ քո ճոխ բուսեր չինար,
Ու ճօշկուտայ քան դուռ դալար.»

Ճամա հին է Թղկուբանցու նուագած այս ներդաշնակ
մեղեդին: Գիեռ Փ. դարաւմ Գրիգոր Նարեկացին նոյն
կերպ է գրուատում գեղեցկութիւնը, երբ գովում է մի
այսպիսի չքնաղ պատկեր.

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիս»

Դաւալանայր յառաւօտուն մէջ մասնաւ է բարձ
Երկու փայլակնաձև արեգական նման.
Յունից նրբենից ի մի կից կաժար...
Վարսիցն երամից գարդ ոլորտ են առեալ...
Յայտէն նունենի զեղաշխտակ ծաղկանց...
Բերանն երկթերթի,
Վարդն ի շրթանց կաթէր...»

Հայոց արդի ժողորվական երկերն էլ նոյն սլատ-
կերներով են հռչակում Հայ կնոջ զեղեցկութիւնը,
այդ ցոյց է տալիս թէ Յովհաննէս Թղկուրանցին
Հաւատարիմ է մնացել ժողորվական Հարազատ ար-
տայալտութեանը: Նա պէսպէս ձևերով, որ սովորա-
կան են աշուղներին, յայտնում է իւր հիացումը իւր
գոված առարկայի վերայ, որի նմանը չի գտնում
աշխարհիս երեսին.

«Գուն օրինակ ես աղէկնուն
Եղ մայր չէր բերեր քան զքեզ
Ախտակ ճակատ, թուլս թուլս աչեր,
Լութֆ ու քարամով լուս երես,
Լար շրթներով վդ վարդ կութափես,
Ճօճան վզավդ բերդեր քակես,
Ամէն անձամբ զեղեցիկ ես
Քեզ նմանակ միուն դու ես...»

Այս կաստարեալ զեղեցկութեան մէջ տեսնում է եր-
գիչն ամենայն լիութիւն կեանքի և բարիքների. նա
խոստովանում է որ իւր սիրած առարկան մէնակ

կարող է ընձեռել նորան այն ամէնն, ինչ որ չի կարող տալ նորան ողջ աշխարհը.

«Երեսդ է արև, ճակատդ է զռնքար,

Կլափդ է խնձոր, ծծերդ է շամամ,

Զինչ դրախտն է Եղեմ, ամէն ծոցդ քո կան,
Երբ շաքարն է մօտ, ի Մըսըր ինձ ինչ կալ.

Սիրով մի սպանաներ

Ճէլլէտ էփէնտի:»

Երգիչն իւր սիրականի մի համբոյրի համար կուտար ամբողջ խորասանը, չապէշտանը, Արարիան, Հընդ-կաստանը. իսկ նորա մի զոյգ վարսերի համար կը զոհեր Զինաստանը, Բոլղարիան, Ստամբուլ. առարկաներ, որոնք այն ժամանակի ամէնաթանգագին գանձերն էին և բանաստեղծների համար դրուտելի: Առհասարակ գովելով գեղեցիկ սեռի ազգեցութիւնը, Թղկուրանցին մերթ խոնարհում է նորա զօրութեան առաջ, ասելով որ դուք հալէք հանէք լերունք.

Սիրով քակէք բարձր բերդունք

Ի ՚ի գլի հանէք վէմք ու սարունք.»

մերթ խոստովանում է, որ կանայք քահանաների համար «ականակուռ զարդ են», աբեղաների համար «որոգալթ» են, վարդապետը որ նոցա տեսնի «մոռնայ զուսումն ու շատ գրունք». և միանգամայն զարմանում է երգիչը, թէ ինչպէս կարող են մեռնել կամ ծերանալ նոքա, որոնք սիրում են մի գեղեցիկ կին.

Ով գքեղ սիրէ, ո՞նց մեռանի,

Կամ երեսուին դառնայ դեղին.»

Այսպէս ուրեմն Յովհաննէս Թղկուրանցին ապրում և մտածում է ինչպէս աշխարհի մարդ. նա ոչ միայն չի խորշում կեանքից և չի խորշեցնում, այլ և սիրում է: Նա գնահատում է կնոջ սէրն ու զեղեցկութիւնը, ճանաչում է և նորա պակասութիւնը. ահա թէ ինչպէս է ներկայացնում նա կնոջ ազդեցութեան վատ կողմը.

«Կինն քաղցրիկ զրուց ունի,

Խալթաւ ի հետ առնէ գալար,

Յանկարծ զթիւնքն ի մարդ թափէ,

Արակէս զակնատ բռնէ անճար,

Յունքն քաղէ, զաքքն դեղէ,

Միշտ դպրունկն ծռմռէ» և այլն:

Այս խօսքերից երևում է, որ Թղկուրանցու երիտասարդութիւնը բնաւ այն համեստ ու սահմանափակ բնաւորութիւնը չէ ունեցել, որ յատուկ էր նորա եկեղեցական կոչմանը. ի հարիէ այդպիսի մերձաւոր ծանօթութիւնը զեղեցիկ սեռին կարող է լինել հետևանք նորա ընտանեկան կեանքին աշխարհական կոչման մէջ և հաւանական է, որ Թղկուրանցին մինչեւ իւր կաթողիկոսանալն եղել է շուշտակ կրօնաւոր: Այս երևում է և նորա միւս երգերից, որոնց մէջ նա պատկերացնում է սիրոյ և կնոջ վտանգաւոր կողմերը և զգուշացնում է մեզ: Երիտասարդութեան ժամանակ կեանքի և վայելչութիւնների սիր-

բահար Յովհ, Թղկուրանցին ծերութեան օրերում զգուշացնում է մեղ զինու չափազանց դործածութեան հետևանքներից, նա խորհուրդ է տալիս հացից լետոյ երկու երեք բաժակ միայն վայելել.

«Քան զգինին լիտու հացին երկու երեք՝ այլն անշահէ է,» նա ասում է, որ «զինին է մայր ամեն մեղաց» «զինին է օգնական շնութեան» «զինին սպանումն զրդու է.»

«Գինին մարդոյ ամօթ բերէ

Եւ ի լեզու չար արկանէ.»

Նկարագրում է Հարբած մարդու զգուելի զրութիւնը և խրատում է հեռու մնալ զինուց, արբեցութեան վատ ախտի հետևանքն է Համարում մարդկանց մոլութիւնն օտար կանալք սիրելու, որոնց վատ աղդեցութիւնը մարդու բարոյտկան վիճակի վերայ պատկերացնում է զանազան օրինակներով, նա ասում է, որ Աղամին «Հալալ կինն» էլ վնասակար եղաւ, ինչ շահ ուրեմն օտար կնոջից.

«Օտարն չէ առողջ մարմին, այլ խոց և քոս,

Որ յախտեան չառողջանայ մեղացն բորբոս.»

Ըստանեկան սրբութեան մէջ թոյն թափող արդ ապականացու չարիքը, որ շատ դարերում շատ աղդերի բարեկեցութեանը հիմնաւոր կերպով սպառնալիք է եղել, անշուշտ ՓԵ. դարում Կիլիկիայի Հայոց մէջ ևս տարածուած է եղել շնորհիւ այն ապականութեան, որ ընդհանրապէս մտած էր մահմեդա-

կան
ժամ
ինչս
դաս
են
ուրե
խսո
րակր

րաբե
ունեց
է ի
որ ել

կանութեան և օտարութիւն ցեղերի տիրապետութեան
ժամանակ. այդ ապականութիւնը պատկերացնում էն
ինչպէս լիշտակագրութիւնները նմանապէս և, վար-
դապետական բազմաթիւ խրատները, որոնք գրուած
են կնամոլութեան և շնութեան դէմ, բնական է
ուրեմն Յովհ. Թիկուրանցու նախանձախնդրութեան
խստութիւնը, որի ազգու յարտարարն է նորա տա-
րակուսանքն ու անկեղծ զղջումը. որից ին մըմարտն

«Ես զքեզ տեսայ նման լուսոյ առ շոյմայի
Զէտ արեգակն որ նոր ելնու այս մաս գնց դո
Սիրոս ալրեցաւ բարկ կրակով ան և նուույ
Ես մնացի իմ կապելու:»

Ես իմ սրտիս դանակ ածեմ, որմա՞

մասի ոյ Զազքս ճաղի տամ Հանելու միտուք սրբ
արու Աստէնս չէնէ խիստ տամօթով, ան զման
Անդէն բաժին կեր գեհենու: Այսուոյ չէն
Բայց չէ շահեր մարդն ի սիրոյ,
Ոչ փառքն առեր ի լԱստուծոյ,
Աստէնս կէնէ զմարդն ամօթով տերաքք մվյուն
Անդէն բաժին կեր գեհենոյ:»

Թիկուրանցու միւս բարոյական խրատները վե-
րաբերում են մարդկացին ընկերութեան մէջ տեղի
ունեցած զանազան չարիքներին, նա յանդիմանում
է իւր ժամանակի մարդկանց կեղծաւորութիւնը,
որ երգչին շատ է վրդովել.

«Այս ժամանակս հանց երեր յոել բառը
Ով որ չգիտէ, թող զիտենալ ազդու»

Զովո՞ր զիտես խլիտ սիրելի, ա մամնյամ
Հութն ի բերնէն լի դուրս կուգալէ» և այստեսն
Խրապում է հեռու մնալ մեղքերից, ատոռածալին
օրէնքներին միշտ մօտ լինել, վշտի ժամանակ ու-
րախանալ, աղքատովթեան ժամանակ վիտք տալ
Աստուն, դպրչանալ լեզուադարութիւնից. «Զրարան
և հերձուածող բանիւ մի՛ լինիր, ստիխօսն և երդ-
մնազանցն մի՛ ընդունիր, տուովթիւնն պարոնին ան-
վայելուչ է» ասում է Թիկուրանցին և վիշեցնում է
որ երեք բան կայ, որ հաւասարապէս ատում են
Աստուած և մարդ, ինչու բայց արձյա սովոր

«Զհարուստ մարդն ստախօս, գաղքատն հսկարտ,
Զալւոր ծերն սրունիկ, և որ սիրէ զարդ»

Ապա պատկերացնում է աշխարհակին կեանքի վախ-
ճանը. մահուան զաղափարը յառաջացնում է նորա
մէջ զիտակցութիւնն աշխարհիս ունախութեան մա-
սին. շատ որտառաւչ է կեանքի բազմափոփոխ հա-
ճուքները վայելած երդչի ձայնը, որի մէջ երկում է
խորին զգացմունք և պարզ ու ազգու արտայախու-
թիւն. աշխարհակին երջանկութեան խաղալիկները
աեսէք թէ ինչպէս են պատկերանում մահու թա-
գաւորութեան մէջ, թոյլ տանք, որ Թիկուրանցին
ինքը խօսի ալդ մասին.

«Ով որ ունի բերդ ու քաղաք, այստեսն ու ինչ
Պարպատ ունի ոսկւով ծեփած, ուստ մշշոց ու
Յետոյ եթող զամէնն անտէր, այստեսն ու ինչ
Ներքւ հողուն է նա պատկած: ի՞ր զո ի՞լլ

Ով որ խմէր զահուշ գինին, բայ ձեռ

Զինքն բտէր քան զիսող ուռած, սմբ

Տեսայ զնա խիստ ատելի ածը տիմաշ

Չիրսոյ Զանուշահոս գէշ մի դարձածք և էթ

Ավ որ հեծնոտը ձի քարձրավիզ, ցանդի նշանան

Աւ թօւր քաշէր ամէն դիհաց, պահապար ցմուն

Տեսայ զնա խիստ մոշիմտնդմ ու ուծոյն

Երկու փայտի մէջ էր պառկած:

Վատ աղջկունք կին գեղեցիկ, չժիշտ

Որ ծամն ու պարսն են յօրինածք գ

Կոքա ունին պայծառ հանդերձ,

Զէտ արեգակն են բալորած, մաշխաց

Շօճնն ւոլոր առնեն կամաց, բառ դասու

Մինին ամէն մարդու սիրած, ինչիմ հաղմի

Ի մահու օրն են առելի բժդմնախայօր

Առաջան Քէշ ու զաղիր են ահսողաց:» ուստա՞զուն

Արմակում մահուան ապականութիւնը տիրում է առև

Հասարակ ամէնքին առանց ինսայելու. Թղկուրանցին

Միշում է մինչեւ անգամ հայր Սրբահամին, իսահա-

կին, Պովուրին, Սողոմոն իմաստունին, որոնք չեն

կարողացել ճղողարիլ մահի ճանկերից. նա տիրել է

մինչև անգամ Տրդատ թագաւորին և կոստանդիա-

նոս կախերը. մարդս որքան էլ որ, զօրաւոր լինի,

առում է Թղկուրանցին, մահը դարձեալ բաղթում է

նորան և դնում է մի քարիտակ, ոժրողոս ու ունենալ

«Թէ կանդնէր հաղար հեծել զազ յէ մեարմա

Եւ ժողովք, իսկի չամաշես. մշտամ : ոյժուոյլ

Թէ հազեր է վեց զրեհ, նույն դու իմ
Նետ նետես ւի թափ անցընես,
Տանիս զնա ի բանտ ածես,
Դէմ գնես, քար մի ձգես...» ալսպէս է յանդի-
մանում Թղկուրանցին մահին, որի ամենավարդողու-
թիւնը պատկերացնում է արծուի օրինակով.

Արծիւ ես յերակ թռչիս,
Լայնաձիգ զժևդ տարածես,
Զինչ յաշխարհս հզօր մանուկ,
Ի թիւիգ ծալըն ծրարես:»

Յովհաննէո Թղկուրանցու երգերի մէջ մի նշա-
նաւոր տեղ է բռնում նորա տաղը քաջ Լիպարիտի
վերայ: Կիլիկիայի Հայոց թագաւորութեան վերջին
զօրավարներից մէկն է քաջ Լիպարիտը, որ աւագ
մարածախու Թորոսի որդին էր և կրտսեր մարածախու
Վասիլի Եղբայրը: Կոստանդին Գ. թագաւորի ժա-
մանակ Թուրքինեան Հարաւութեան վերջին շունչն
արդէն մօտեցել էր: Տարսոնի ամիրան Մանչակը 60
Հազար թուրքերով 1368 թուին յարձակուեցաւ Սլո-
մալրաքաղաքի վերայ: Կոստանդին Գ. նորա գէմն
ուղարկեց քաջ Լիպարիտ զօրավարին, որ յաղթեց
և Հալածեց թշնամուն և գերի բռնեց Մանչակի
«Գոված տղան:» Վիրաւորուած թշնամին 1370
թուին նորոգեց իւրա արշաւանքը Սմի վերայ: Այդ
անգամն էլ քաջ Լիպարիտն ելաւ՝ նորա առաջը
կտրելու: Սակայն շատ սրտաշարժ էր այս նուազի

տեսարանը. Լիպարիտ լաւ սպառազինուելուց յետոյ հանդէս եկաւ մատուցանելու իւր վերջին հրաժեշտը.

«Երկրպագեաց սուրբ աթոռոյն,

Եւ ծունը եղեր ամէն խորան.»

մնաս բարեւ արաւ իւրայիններին այնպէս հառաջեց ու համբուրեց իւր սիրական որդուն Յովհաննէսին, որ ամբողջ բանակը լաց եղաւ ողջունեց եղբօրը, կնոջը. «Սաց. Որդեանկ իմ Յովհաննէս,

Վասիլ եղբայր իմ սիրական ուստի առաջ Փառաց տիկին դու Մանանայ Իշխանութեան Տիշխանուհի արենման,

Հայեաց պատկերս ի մանկութեան,

Որ տի մտնիմ ի հող տապան.»

Այսպէս իւր մահն աչքն առած Լիպարիտը ձայն տուեց թագաւորին.

«Հայոց թագաւոր ազնուական

Հաստատ ու ամուր պահէ զիարմունջն,

Որ ես մտնում ի մէջն ու դամ.»

Քաջ Լիպարիտը մտաւ թշնամու բանակը, Անոր պաշտպանող կամուրջի պահպանութիւնն յանձնելով

թագաւորին: Քաջարար խիզախնելով թշնամու վերաց, Լիպարիտ այնպիսի կոտորած արաւ, որ «արիւն գետեր ելան.» բայց իզուր. թշնամին կարողացաւ առնել կամուրջը, որ կոստանդին Գ. անդօր էր գտնուել

պաշտպանելու: Եւ երբ քաջն Լիպարիտ վերադառնում էր Սիս, անակնունելի էր հանդիպումը թուրքերի գնդերին, որոնք

յուսմբ գիրին ամեն դիհաց վկայալ ։ յմաղասմո
զատ խոյեցին զրադժողվկայն, և այն սիրման
չայէր ողորմ յաջ և ի ձախ ըամքաբղից»

Զոչ ոք գտաւ իւր օգնական» և ուշո՞ւ ։

Ամստեղ այդ անթիւ գնդակների կարկտանման տես-
զացող հարուածների տակ մնաց քաջ պիտիանը
թշնամիք կտրեցին նորա գլուխը և տարան փրենց
հետ, թողնելով կամուքի վերակ նորա մատրմինը:
Նորա հետ սպանուեցաւ և Ալր Յոհանը, սրդին է
արդեօք կիպարիսի, թէ ուրիշ անծանօթ ոք, լայտ-
նի չէ: Ինչպէս ասում է Թլկուրանցին, քաջ կիպա-
րիսն իւր անձնազահութեամբ անմոռանալի մնաց
չայոց մէջ, որոնք ասուս ու ի նիւռն ըս

Յաւ «Յորտեղ նստին հաց ու սեղանան ու սէլուզ
ֆողովք բազում և շատ իշխան, առաջ ըմբռ
Ցիշեն զնա սուրբ քահանայք, ուն ըստա»
Տան ողորմի, ասեն նմա:» ու սատաս

Այստեղ կնիք դնելով մեր խօսքին, ընթերցողին ենք
թողնում մեր առաջարկած ընադրից իմաստամբերի
Յովհաննէս Թլկուրանցու տաղերի այլ լատկութիւն-
ները: Յանաչեն խաճարքոյ զառաջախ ու զարան
Սլժմ մի քանի խօսք առաջիկայ հրատարա-
կութեան մասին: Մենք տալիս ենք ընդամենը
տառնելից երդ: Եոցանից ութը մենք հանել ենք
ձեռագիրը օրինակներից, որոնց թաւականները լու-
սանցքներում նշանակել ենք: Երեքը նոյանից, որ-
քան մեզ լայտնի է, առաջին անդամ են լոյս տես-

նու
քալ
Հան
Հրա
տան
առա
հայ
են
նշա
տար
մաս
հրա
մեր
ըլը
սուս
է,
մէջ
Ձին
տար
է ե
խկ
նուս
որ
քի
շողչ
և Հ
նակ

նում, իսկ միւս հինգը, թէև հրատարակուած էին, քայլց անկալու է թէ որ ժամանակի ձեռագրերից են Հանած. ալդ հինգը մենք համեմատեցինք արդէն Հրատարարակուածների հետ և տարբերութիւնները լուսանցքներում ցուց տուինք: Միս ուժն երգերի հրատարակութիւնը եղել է Բաղմավէպի: Մանանալի, Հայերգի և Սիսուանի մէջ: Արոնքոր մի քանի տեղ են Հրատարակուած, նոյն համեմատութիւնն էլ նշանակեցինք լրսանցքներում: Մեր ներկայ հրատարակութեան նպատակն էր նպաստել նոր համեմատութիւնների, յաւելուածների և լայտնութիւնների հրատարակութեան, որպէս զի նորանով ճշխտալ մեր առաջարկած շատ համեստ և չափաւոր պաշարը Թղկուրանցու այնքան հետաքրքիր տաղերի ուսումնասիրութեան: Մեզ համար այժմէն իսկ պարզ է, որ մեր առաջարկած տաղերի խմբագրութեան մէջ էլ պակասութիւն կալ. զորօրինակ՝ հէնց առաջին «Փէնայ բահար, ալլիի բահար», որ արտագրուած է 1547 թուի ձեռագրից. մեզ այնակ է երևում, որ ալդ երգը, որ լի է կրկնութիւններով, իսկապէս 2—3 երգերից է բաղկացած. դժուարանում ենք այժմ մեր եղբակացութիւնն անել, քանի որ համեմատութեան բաւական նիւթ չկայ մեր ձեռքի տակ: Այդպիսի մի երգ էր, օրինակ, «Արևնման շողշող կըտաս», որ հրատարակուած է Մանանալի և Հայերգի մէջ, և մենք համեմատութեան ժամանակ եր լուսի բաժանեցինք՝ երգի անուան երկու

Այս Սահմանի բանիքանց ու ուրեմն վաճառչութեան մէջ պատճեն առ մասն առաջարկ բանաբանութեան մէջ դժբաշ բժնձն Ա.

Գէնայ բահար, ալլ' էփ¹ բահար. ողմզյան
Ալլ' էփ կուտան սիրոյ խարար. գարակ
ծով ծով աշւեր ու լուս քնար.
Ունքն կեռ էր² քան գլամար,
Ճակատգ է լուս և լուսքնար³, զմուռն
Բոլոր լուսին⁴, շամս ու դամար.
Վարսերդ ոսկի թելէ⁵ քաշած, ունք ՀՅ
Վերայ մարմնուդ եկեալ հաւսար⁶, ոյ ի՛
Երեսդ ի վառ⁷ է ծիրանի,
Վարդ, ու հան ու նունուֆար⁸.

Ծոցդ է բաղչայ վարդով ի լի.
Մարգրիտ ատմունքդ ի շարէ շար⁹,
Քո ձախնդ անուշ քաղցր եղանակ¹⁰
Բերնէդ ի վայր թափուի¹¹ ջուհար,
Այդ քո պատկերդ¹² է լուսեղէն,
Ալլ արեգակն լուս չի տար.
Մարմինդ քո ճոխ¹³ բուսեր չինար.
Ու ճօշ կուտայ¹⁴ քան զուռ դալար.
Այդ անյատակ ծովուդ նման
Գերիս ի մէջն զարդ աբար¹⁵.
Հանցեղ նետով զիս խոցեցիր,
Որ ալլ չունիմ բժշկարար.
Է գեղեցիկ կերպիւ սուրամժ,
Որ է ստեղծուած նաշիս ու նիգար:

Նշտարենի ծառ ես ծաղկեալ ^{16.}
Պտուղ կուտասմ մուշկ ու ամպար ^{17.}
Բեհեզ հագեր ես ծիրանի,
Ծալքերդ ամէն մարդաբաշար ^{18.}
Քաղաք Խաթալ 2ինու-մայն
Ու Բուրսայու բերած պաշար ի ինչ ինո՞ւ
Այդ ճանապարհոց, որ կու քաղես, մզմո՞յ
Բուսեր շուշան ու նունուֆար ^{19.}
Կարմունջ կապիալ ես ապիկի ^{20.}
Եւ դետ գինի ուրախարար.
Ով որ խմէ ի քեզանէ ^{21.}
Աւրախանայ սրտովն յօժար:
Արի Եկ իջնունք ի բաղենին ^{22.}
Ու բլբուլին անենք նադար.
ՈՐ ի քափուր վարդի սիրոյն
Ի շուռ կմւդալ քան զիսելաղալ ^{23.}
Դարնանալին ամիսն երթ գտոյ, ունզոյ
Հաւասար ծաղկի չոր և գալար.
Գետերդ ^{24.} լորդոր գնացք աճնան
Ի լեռներուն թափին ի վակը:
Վարդ որ սիրոյ կուհանդիպի ^{25.}
Նա քան զկրակ կուլինի վառ.
Ալ ոչ աղօթք ի միտ ^{25.} կուպար,
Ոչ յալսմաւաւը կարդայ ու ճառածաւ
Ճրթունքդ շող է լուսեղէն,
Պըռնկնէդ ^{26.} ի վայր թափի ճուհար ^{27.}
Ով որ մեղաց ճաշակն առնու, բնուս չ դի

Ալ Սոտոծոյ չի տար խարար.

Աէրն զԵդամ զլախտէն հանեց²⁸.

Յերկիր ձգեց, արար շիւար.

Եւ զնա մատնեաց սատանալի

Ար չարչարեաց ամ վեց հազար.

Սէթալ որդիքն իսաւնակեցան,

Ար ճղնաւորքն էին յօժար.

Զիոդ և ծնծղեակն ²⁹ լսեցին, զումի ճակ

Ամէնքն եկին լիռնէն ի վալրէ պարզ զի

Կինն զՅովշաննէոն գլխաւեց

Հերովդիայ պղծոյն համար,

Ար վառեալ էր ցանկութեամբ,

Չես Փութով տարաւ դկամքն ի կատար:

Աէրն հանէ մարդն ի խելաց,

Ար այլ ըսկի ³⁰ չկաց խարար,

Իմաստութիւնն խափանի.

Եւ հանց ³¹ գառնալ քան զդիւահար:

Կինն քաղցրիկ զրուց ունի.

Խալթաւ ի հետ առնէ դալար.

Յանկար զարդ զթիւնքն ի մարդ թափէ.

Որպէս զակնատ բռնէ անձար ³³:

Յունքն քաղէ ³⁴, զաքքն գեղէ,

Խենէ շանալ քան զինիար ³⁵,

Միշտ զպունկն ծռմոէ ³⁶,

Զմարդիկ կուձգէ ի քարն ի վալր.

Գու ստեղծեր զկինն ի կողէն ³⁷

Վասն Ադամալ սիրոյն համար

Թէ աճեցէք և բազմացէք 17
Եւ շրջեցէք լեռին ւ'ի քարք. 18
Նեռ այս սիրովն բորբոքին զիմիչը
Այս հողածին մարդիքս չար, ամք 19
Որ հանապաղ կու պրոնկին,
Երթան ի կեր որդանցն յօժար. 20
Թուլկուրանցին գքեզ կ'աղաչէ, 21
Թէ կնոջ սիրոյն մի տիրանար 22 և բախ
Որ չզրկիք յանձառ լուսոյն,
Այլ լԱստուծոյ չինի քեզ ճար: 23 յաջը մնի
այսնաշ միածրու բայրինդ:

Պահ. Այս երգը հանած է մի ճեռագիր տաղարանից
1647 թուին գրած: Նոյնը հրատարակուած է Մանանալի մէջ
1876, եր. 269. նշանաւոր պարբերութիւնները սոքա են: 4. Ճեռ.
օլտի. 5. Ման. Ռւնքն է կեռեր. 6. Ման. լուսնկար. 7. Ման.
լուսնոյ. 5. Ճեռ. ուկով թիւով. 8. Ա. վերաչ անձինդ եղեր հաւար.
9. Ա. երեսրդ գառ. 10. Ա. նօնօփար. 11. Ա. առամունք շարէ.
շար. 12. Ա. քաղցրեղունակ. 13. Ա. թափի. 14. Ա. մատունքն. 15.
Ա. անձնդ ճող. 16. Ա. կուճոսկուտառ. 17. Ա. զարեւար. հետևեալ
չորս տողն Ման. մէջ չկաչ. 18. Ա. ծաղկեր. 19. Ա. մոշք ու ամբար.
20. Ա. ծամերդ ամեն են ուկելար. 21. Ա. նունուլիք. 22. Ա. կա.
պած ես ապակի. 23. Ճեռ. ի սեղանէ. 24. Ա. Արեկ իշցուք ի մեր
բաղչալն. 25. Ա. զեկ դիւահար. 26. Ա. ջրեր. 27. Ա. ի յաչք. 28. Ա.
պոկէն. 29. Ա. ջաւար. 30. Ա. եհան. 31. Ա. զիստ. 32. Ա. քան զօձ քայլէ. 33. առնէ գալար.
34. զթոյնն թափէ յանկարծակի, զմարդ զէտ ակնատ բռնէ ան.
ճար. 35. Ա. Զունքն ծարրէ. 36. Էնցեզ լինի քան զբելիք. 37.
Ա. ծամոտէ. 38. Ա. այս 8 տողը պակաս է:

Հայոց մարդ մարդ թիւրանի:

Ճար մատիք մատիք զթօքան տիք

Յանաշ մատիք յանանը մատիք

Բ. ՎԱՅՆ ՍԻՐՈՅ

Արև նման շողցող կըտաս 1 առած քեզ ալ
Յորժամ 2 սիրով զաշերդ յածես, մշամ մշամ
Թէ զիս 3 լիշես, թէ չլիշես, ուշալլ
Ես կուտիրեմ սրտովս դքեզ: յեզ ի նվազ
Դու զիէմերն խորտակես, առաջ բարձ ի ոլ
Դու զլերունքն հալ 4 հանես.
Զով դու միրես, նադար առնես 5, ի մզօն
Ընանց կրակով զանձնիկն ալրես: սրամ առաջ
Դուն օրինակ ես աղէկնուն 6,

Ալ մալր չէր բերեր քան դքեզ 7.

Սպիտակ ձակատ, թուլս թուլս 8 աչեր,

Լուժֆ ու քարամով լուս երես:

Լար շրթներովդ վարդ թափես 9,

Աօձան 10 վզովդ բերդեր քակես.

Ամէն անձամբ ես գեղեցիկ,

Քեզ նմանակ միայն դու ես 11:

Ֆողդ է դրախտ անմահութեան, թեզ էն յա ագի:

Ընմահական պտղով դրախտ 12.

Դուն օրինակ ես աղէկնուն 13,

Զքեզ սիրէ Աստուած և մարդ:

Հարեզանոյն ես որոդալիթ,

Քահանալից ակնակուռ զարդ 14.

Զմիակեցին խելքն տանիս,

Որ կացեր է զօրն անարատ:

Զկալ ի քեզ մաղ մի դալատ 15.

Յոլոր¹⁶ անձամբդ սուրբ անարատ.

Ես կուզեմ զիս քեզ մատաղ,

Ու քեզ ծառայ ու քեզ զէքաթ¹⁷։

Բայցէն ասեմ՝ ճարակ չկալ¹⁸։

Մահու մեղաց ներքեւ եմ ես.

Հայիմ ի քեզ, հայիմ ի նա,

Որ ի հողոյ ստեղծեր զքեզ¹⁹։

Խե Յովհաննէս Թուլկոքանցի,

Զօրն ի բուն ընդ ալ²⁰ կ'ասես,

Զմարդն ի կրակ կաւզակս,

Դասնաս, լուս ջուր, և անցունես²¹։

Յ ա ն օ թ . Այս երգը հրատարակուեցաւ 1876-ին Մահանակը մէջ, 1883-ին Հայերգի մէջ դրս տեսաւ տրամ մի ուրիշ օրինակը, որ խակապէս երկու մասից է բաղկացած, ինչպէս երեսում է երգի անուան կրկնութիւնից երկրորդի մէջ։ Այս օրինակը Մահանացին համեմատ է տարբերութիւնները Հայերգից հետեւալիքերն են։ Հայ. շողշողին ես. Հայ. քանի. Հայ. սէր. Հայ. ի հալ. Հայ. Ավ դու սիրով նատ արար ես. Հայ. աղեղան. Հայ. որ մայրն չէ բերեր զէս քեզ. Հայ. ու սև. Հայ. շար շրթունքովդ փարդ կութափես. Հայ. հոփհան. Հայ. Քաւ էլ թէ քեզ նամն դու ես. Հայ. անմահական պատղօվ իլի. Հայ. դու աննման ես մէջ աղլինուն. Հայ. քահանակից ակատ ու զարդ. Հայ. Զերա չունես իսկի զալագ, չկաչ ի քեզ մազ մի արատ. Հայ. Ժիք. Հայ. զաքաթ. Հայ. բայց ինչ անեմ՝ ճարակ չկալ. Հայ. այս Յ տողը Մահանացի մէջ ալապէս է — մեղաց ներքեւ եմ, հայիմ ի քեզ, հայիմ ի նա, որ ի հողոյ ացդքան չքնաղ ստեղծեր է զքեղ. Հայ. զուն ազնւոց ունացն ես։ Հայերգի մէջ 17-ից յետոց կաց երթ տող ես, որ կապ չունի ամբողջ հիտ. այդ տողերն են՝ ջուշան, ռահան ու մանուշակ ու նուհօֆար ու սերկեիլ, նուռն ու նարինջ ու կարմիր փարդ։

Գ. ՏԵՂ ՄԻՐՈՅ

Ասի՝ սիրէ զիս, ծով աչեր. քըասնց ոյր.
Նա ասաց՝ պահեմ զաշս ի վերան. զարա՞ն
Նիստ, որ հալիմ յերեսդ ի վայր,
չերիք կացիլ, ինձ յերևան:

Թէ շատ թէ քիչ ի յետ ձղեմ.

Միթէ անցնի հուրս ի խափան.

Նա սէր ի սիրտս ի ներս կ'երթալ,

Ես կումնամ մեղաց միայն:

Բերեմ մեղաց զահն ի մտիս,

Ու զգժոխոց հուրն անվախճան.

Միթէ աղատ եմ այս կրակէս,

Ու անվախճան ինձ վառեցան:

Խև Յովհաննէս Թուլկուրանցի,

